է մաքրութիւնը. լուերուն շատնալուն պատճառ փոշին է. լուն մարդու աչեամբը կը մնանի, փոշւոյ մէջ կը շատնայ։ Թէ որ խուցի մը մէջ լաթեղէններ ը մաքուր ըլլան, և ամենևին փոշի չըլլայ, այն խուցին մէջ լու չըլլար, եղածն ալ քիչ ատենէն կը ջնջուի։ Լուերը բնակութիւն չեղած տեղն ալ, երբ մաքուր պահուած չէ, ողջ կը մնան և կը շատնան, և նոր բնակիչ գացողին վրայ բաղմութեամբ կը յարձակին։ Լուոտ բնակարանը մաքրելու համար առաջին կարևորն է աղէկ մը լուալ ու մաքրել բնակարանը. և եթէ պէտք ըլլայ՝ սաստիկ ծխախոտի մուխ ընել խուցին մէջ, որով կը սատկին լուերը։

Լուերը չան և կատուի վրայ խիստ կը շատնան. զանոնք լուէն ազատելու համար ռետինը (չամ սախրզին) բարակ փոշի ըրէ՝ ու այն փոշւով չփէ կենդանւոյն մորթը երբեմն։ Դարձեալ՝ ծխախոտը եփէ ու անոր ջրոյն մէջ շունը լուա. բայց այն ջրէն հանելուդ պէս մէկէն ուրիշ դաղջ ջրոյ մէջ աղէկ մը լուա կենդանին՝ որ թիւնաւորուելու վտանգ չըլլայ։

Մլուկները ջարդելու մէկ հատիկ հընարքն է ծծմբի ծուխ տալը, որ ամենծակ կը մտնէ ու անոնց ձուերն ալ կը սպաննէ։ Նախ խուցէն դուրս հանէ երկաթէ և պողպատէ բան մը եթէ գըտնուի խուցին մէջ. և երկու կամ իրեք ամաններով դիր խուցին մէջ ծծմբի կըտորուանք, և այնչափ տաքցու՝ որ սկըսին վառիլ ծծումբները, և պատուհաններն ու դռները գոց թող ինչուան տասը ժամ. յետոյ բաց պատուհաններն ու երկու իրեք ամանով կիր անուշադրով խառնած և քիչ մը տաքցուցած դիր խուցին մէջ քիչ մը ատեն գոց պատուհաններով. ու ետքը նորէն առջի ը-բածիդ պէս ծծումբները վառէ թող տասը ժամ. ու նորէն բաց պատուհաններն ու դարձեալ անուշադրով կիրը տաքցուցած դիր քիչ մը ատեն. ու անկէ ետև բաց պատուհաններն ու թող որ խուցը աղէկ մը հովահրի։ Երկու իրեք օր այսպէս հովահրելէն ետև կրնայ բնակուիլ։ Այսպէս երկու անդամ մէջ ընդ մէջ տաքցուցած կիր դնելուն պատճառն է՝ որ չըլլայ թէ ծծումբը լաթերուն մէջ թափանցելով, զանոնք փըտեցընէ։

Այս մլուկներուն ջնջելուն յարմար ժամանակն է յուլիս և օգոստոս ամիսներն որ ատեն որ ձուերը բոլոր ելած կ'ըլլան, և աւելի դիւրաւ կը ջնջուին։

Իսկ նախապահեստ զգուշութեան համար՝ երբ նոր տուն կը շինուի, կամ երբ պատերը կը նորոգուին, երեսի ծեփին մէջ պէտք է խառնել փոշի դառնիճ վարունգի, (coloquinte), որ սաստիկ թոյն է մլուկներու։ Նոյնպէս պատերը ներկելու ատեն ներկին մէջ պէտք է խառնել նոյնը. և թուղթ փակցընելու ատեն խիւսին մէջ խառնել. որուն չափն է մէկ ոխա ջրոյն մէջ տասուերկու տրէմ փոշի. նոյն չափով ալ մէկ ոխա խիւսին մէջ և մէկ ոխա պատրաստած ներկին մէջ։

Մայիս.

Են ոմանք որ 'ի ցրտային և 'ի գիճային լերինքն զտնկուածս տնկոց 'ի մայիսոյ մտէն մինչ 'ի յունիսի երեքտասան օրն առնեն. և գիտելի է որ լաւն այն է, որ զամեն ազգ տունկ յառաջ քան զպտկելն է պարտ տնկել, զարդել[1] 'ի թզենւոյն. որ զայն եթէ յառաջ տնկես՝ թէ յետև՝ լինի։ Եւ են ոմանք որ զայգիքն թողուն՝ պտկէ, և ապա տնկեն, նոյնպէս և զպատրուսելն. զի ջուր ծառանց՝ զերդ սոսինձ լինի դարձել. բայց մեք յառաջինն և կանուխն եմք հաւան. և այլքն 'ի հետ պտկելոյն փորձ արին և պատրուսեցին, նա եղև զի սղալեաց։ Եւ զպատրոյսն՝ թէ 'ի ջերմային տեղւոյն 'ի ցուրտն կամենաս, դու քաղէ և 'ի ճառայ[2] դիր. և զբերանքն կալ, և 'ի հիւթ գետին թաղէ, մինչև բանուի ցրտային և իւր ժամն

1 Զատ 'ի, բաց 'ի։
2 Կարաս, հողէ ման։

գայ. և փորձած է՝ որ երբ 'ի յերաշտն զայգին լաւ փորես, նա փորելն պաղեցնէ զտունկն, և զծարաւն անցնէ։ Եւ 'ի մայիս ամսոյս պարտ է փոփոխել զհով տեղեացն տունկքն և զմեծամեծ ձիթենիքն և զայլ ազգ ծառքն։ Ի մայիսի աղբել այս նշանաքս զոր գրեմք. փորէ և բաց աղէկ զծառի տակքն, և ըզմաքուր հողն ընդ տակքն 'ի վեր կուտէ, որ աղբն յինքն չհանի՝ որ այրէ և ապականէ զծառն. և զպատրուաներն այս ամիս ջրէ, և ջուր 'ի վերայ սրսկէ։ Եւ զայն գետինն որ ուղենայ որ գքաղն անցէ, և զայս ամիսս հնձէ զթրմղի[1] հերն՝ և 'ի վերայ խոտին փռէ որ չորցընէ զայլ ազգ խոտքն, որպէս այլ յառաջն գրեցաք։ Են ոմանք որ հոգցի[2] ցանեն զթրամուղն 'ի սիզուտ և 'ի փչաբեր վայրքն, նա սրբէ զտեղքն և չորցնէ զամեն վայրի խոտքն։ Նոյնպէս երբ վաստակես զբուսած և զծաղկած թրմուղն հետ այլ խոտին, նա փտի թրմուղն, և զայլ խոտն 'ի հետ փտեցնէ։ Են ոմանք որ զթրմուղն յայգին ցանեն, նա զայլ ազգ խոտն ոչնչացնէ, և տայ ինքն զիւր պտուղն։

Եւ 'ի մայիս ամիսն է պարտ զգինին յայլ ամսան փոխել. և տես որ կարասն նոր ընուա՝ նա 'ի լի չընուս, այլ երկու թիզ պակաս լից, որ շունչն և ծուխն ելնէ գինոյն. և թէ զիւր մրրէն 'ի հետ ընուա՝ զէն չունի. ապա տես որ 'ի մէկալ կարասն օտար մրուր չլինի ցնացեալ, թէ ոչ՝ աւերի զամենն։

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

---

1 Հին բժշկարանն զթրմոլ ասէ Եգիպտոյի բոլոր։

2 Հոգով, կամաւ։

ՌԱՓԱԷԼ ՊԱՏԿԵՐԱՀԱՆ

Շատերուն միշտ զարմանքի նիւթ եղած է բազմահռչակ անուանս համբաւը, արժանին արդարև անմահական փառաց և պատուոյ, որ և արդէն իսկ անմահացած է դեղարուեստից ընդարձակ ասպարիզին մէջ։ Եւ միթէ կարելի՞ էր այնպիսւոյ բարձրագոյն հանճարոյ տէր եղող մը, ինչպէս պիտի տեսնենք առջևի հատուածիս մէջ, առժամանակեայ իբրև յաւաղի՝ հետք մը դրոշմէր իր ասպարիզին մէջ, և կամ թէ երեկոյեան անցաւոր ստուերներուն նըման իր տարաժամ մահուամբը հետը մէկտեղ ծայլէր՝ ծրարէր անմոռաց յիշատակն ալ։

Զափաւոր աստիճան պատկերահանի մը որդի էր Ռափայէլ Սանցիոյ, Ուրպինո քաղաքը ծնած, 1483ին աւագ ուրբաթ օրը։ Հրաշալի գեղեցկութիւն մը կը փայլէր իր փափուկ մանկութեան դէմքին վրայ որ և տեւեց անեղծ և անթառամ մինչև իր մահը։

Նորածաղիկ մանկութեան հասակին մէջ սկսաւ ցուցնել կարգէ դուրս հանճարի տէր ըլլալը. արդէն իսկ ծնողքն ալ իբրև մարգարէութեան ոգւով լեցուած տեսակ տեսակ բարենշան գուշակութիւններ կ'ընէին իրենց որդւոյն վրայօք։ Ռափայէլ երբոր քիչ մը հասակն առաւ, հայրը ետևէ եղաւ կրթել զորդին, բայց տեսնալով որ տղան զարմանալի յարմարութիւն մը և հանճար կը ցուցնէ պատկերհանութեան, շուտով փերուճիա խաւրեց որ երթայ մշակէ իր հանճարը Պետրոս Վանուչչիին քով որ նոյն ժամանակուան երևելի պատկերահաններէն մէկն էր։

Գնաց Ռափայէլ և տեսնալով հոն Պետրոս Վանուչչիին նկարքները աշխոյժ և եռանդ մը զգաց, մինչև անխոնջ պարապելով քիչ ատենուան մէջ գերազանցեց իր վարժապետը։

Առջի նկարած պատկերներուն մէջն ալ՝ անզուգական հանճարոյն փայլերը